ԿԱՐՃԻՔ

Անի Անդրանիկի Սարատիկյանի «Շնող գետի ավազանը երկաթի դարում (ըստ հնագիտական նորահայտ տվյալների)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորը ներառում է հիմնական տեքստը, որը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից (392 միավոր): Այդ հատորում տեղ են գտել նաև գործածված հապավումները և հավելված 1-ը (աղյուսակներ, գծապատկերներ, քարտեզներ և հանույթներ): Երկրորդ հատորը հատկացվել է հավելված 2-ին (237 լուսանկար, գծանկարների 186 տախտակ, 14 չափագրություն): Բուն շարադրանքը 108 էջ է, գրականության ցանկը՝ 37 էջ, հավելված 1-ը՝ 115 էջ, հավելված 2-ը՝ 399 էջ: Հավելվածներն էականորեն նպաստում են շարադրանքի համակողմանի ու ճշգրիտ ընկալմանը:

Սույն ատենախոսությունը շարադրված է Լոռու մարզի Թեղուտի հանքավայրի տարածքում գտնվող երկաթեդարյան դամբարանադաշտերի և դամբանախմբերի հնագիտական ուսումնասիրության հիման վրա: Այս աշխատանքը քննարկվող թեմային նվիրված առաջին ծավալուն ուսումնասիրությունն է, որի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ Հայաստանի երկաթեդարյան մշակույթների հիմնախնդիրը դեռևս կարոտ է պարզաբանման: Բանն այն է, որ լճաշեն-մեծամորյան մշակույթի կազմում երբեմն քննարկվում են հնագիտական այնպիսի համալիրներ, որոնք առավել բնորոշ են զարգացած երկաթի դարաշրջանում այլ տարածաշրջաններից Հայկական լեռնաշխարհ ներթափանցած ցեղախմբերին: Պետք է հաշվի առնել նաև լճաշեն-մեծամորյան մշակույթին վերագրված մի խումբ դամբարանների թվագրության վերանայման անհրաժեշտությունը: Այդ ուղղությամբ որոշ փորձեր արվել են և

շարունակվում են կատարվել: Այս առումով, քննարկվող ատենախոսությունն իր նպաստն է բերում դեռևս չլուծված մի շարք հարցերի լուսաբանմանը, որի համար հեղինակը տքնաջան աշխատանք է կատարել:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, առաջադրվում են աշխատության նպատակն ու խնդիրները, ցույց են տրվում տարածական սահմաններն ու ժամանակագրական միջակայքը, անդրադարձ է կատարվում ուսումնասիրության պատմությանը, ընդգծվում է հետազոտության աղբյուրագիտական հենքը, ներկայացվում են ուսումնասիրության մեթոդը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Առաջին գլխում քննարկվում են Շնող գետի ավազանի դամբանային համալիրները: Ներկայացվում են հիշյալ տարածքի երկրաբանական համառոտ բնութագիրը, դամբանադաշտերի և դամբանախմբերի աշխարհագրական դիրքը, դամբարանների կառուցվածքը, թաղման ծիսակարգը: Ասվում է, որ ուսումնասիրվող տարածքին բնորոշ է երկրաբանական բազմաշերտ կառուցվածքը, որը նպաստավոր է ինչպես մարդու բնակության պայմանների, այնպես էլ հանքային հարստությունների օգտագործման առումով: Դամբանադաշտերն ու դամբանախմբերը սփռված են ծովի մակերևույթից 655-950 մ բարձրության վրա, դրանք խիտ դասավորություն ունեն, առավելագույն հեռավորությունը դրանց միջև 3,5 կմ է: Տարածաշրջանի հնագույն բնակիչներն առաջին հերթին զբաղեցրել են պղնձի ու երկաթի հանքերով հարուստ, հաճախ՝ բուսառատ, գոտիները: Դամբարանադաշտերի տարածական տեղաբաշխման վերլուծությունն իրականացվել է աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ/ՋիԱյԷս) միջոցով: Այդ գործիքակազմով փորձ է արվել վերակազմելու հնագույն համայնքների տարածքային կազմակերպվածությունը, բնակավայրերի և դամբարանադաշտերի փոխհարաբերությունները, հաղորդակցության ուղիները և տնտեսական տարածքների սահմանները: Պարզվել է, որ դամբարանադաշտերը տեղակայվել են բնակավայրերի անմիջական հարևանությամբ, սակայն միմյանցից առանձնացված՝ ձևավորելով իրարից բաժանված բնակելի և սրբա-

զան/թաղման տարածքներ: Բացի այդ, հուշարձանների տեղաբաշխման բնատես-քային չափորոշիչների կիրառությամբ արձանագրվել են հետևյալ օրինաչափութ-յունները.

1) Հուշարձանների 85 %-ը տեղադրված է միևնույն հորիզոնականների վրա:
2) Ապահովված է տեսողական կապը դամբանադաշտերի և բնակատեղերի միջև:
3) Տեսադաշտային վերլուծությամբ պարզվել է, որ դամբանադաշտերի զգալի մասի տեղանքներից տեսանելի են Շնող գետի հովիտն ու հարակից տարածք-ները:

Պեղված փակ համալիրների փուլային դասակարգման համար գործածվել է լճաշեն-մեծամորյան մշակույթի վերանայված սանդղակը, որն այժմ ընդունված է հնագիտության մեջ: Քննարկվող նյութերի համեմատական քննությամբ պազվել է, որ դրանք ունեն լճաշեն-մեծամորյան մշակույթին բնորոշ երկաթեդարյան գույքա-կազմ: Հնագույն թաղումները հայտնաբերվել են Բաղերի ճալա դամբանադաշտում (վերագրվում են մ.թ.ա. 1150-1050 թթ. ժամանակագրական միջակայքին), իսկ ամենաուշ թվագրություն ունեցողները (մ.թ.ա. VII-VI դդ.) հանդիպում են Բովեր 2 և Փիջուտ դամբարանադաշտերում: Դամբարանների թվագրությանն առնչվող տվյալ-ները համադրվել են 12 նմուշներից ռադիոածխածնային մեթոդի կիրառությամբ ստացված արդյունքների հետ:

Այս գլխում քննության են ենթարկվում նաև թաղման ծեսի երկու բաղադրիչ-ները՝ դամբարանների կառուցվածքը և թաղման ծիսակարգը: Անդրադարձ է արվում դամբարանների ձևին, չափերին, շինարարության ժամանակ օգտագործված քարա-տեսակներին: Դամբարանը բնորոշվում է որպես «թաղման ծեսի նյութական դր-սևորման հիմնական միավոր»: Նշվում են Շնող գետի ավազանի երկաթեդարյան դամբարաններում փաստագրված թաղման եղանակները՝ դիադրում, դիամասնա-տում, դիակիզում, հուշադամբանային «թաղում»: Արձանագրվում է, որ տարածված է եղել միայնակ թաղման տեսակը՝ մեկ բացառությամբ: Ընդգծվում են նաև թաղման ծեսի համակարգում նկատվող որոշ առանձնահատկություններ:

Երկրորդ գլխում քննության է առնվում թաղման գույքը՝ խեցեղենը, մետաղե առարկաները, քարից ու այլ նյութերից պատրաստված իրերը: Խեցեղենի տեսականին կազմված է սափորներից, ծորակավոր անոթներից, կճուճներից, թաս-քրեղաններից, կափարիչով անոթներից, կախկալներից, քամիչներից, կարասներից, կաթսայատիպ անոթից, գավաթներից: Հեղինակի հավաստմամբ ամենատարածված խեցանոթները սափորներն են: Դիտարկվում են անկանթ, միականթ ու երկկանթ սափորները: Ծորակավոր անոթների շարքում նշվում են միականթ, երկկանթ և քառականթ տեսակները: Ատենախոսի կարծիքով, հիշյալ անոթները «առօրյա կիրառությունից զատ, օգտագործվել են նաև ծիսական արարողությունների ժամանակ»: Կճուճները դասակարգվում են ըստ կանթերի (անկանթ ու երկկանթ) և կափարիչի առկայության: Կափարիչով փակվող կճուճները փոքրածավալ են, իսկ փոքրիկ խփերն օժտված են բռնակով: Քրեղանները բաժանվում են մի քանի խմբի՝ անկանթ, կանթերով, եռոտանի և թաս-քրեղաններ: Հեղինակն անդրադառնում է նաև միականթ գավաթներին, որոնց թվում կան նաև զարդաբանված օրինակներ: Դրանք տարբերակվում են ըստ անոթի և կանթի հորինվածքի, նշվում են կենդանակերպ կանթով օրինակները: Որպես առանձին խումբ են դիտարկվում նռնաձև գավաթները: Մեկ այլ խումբ են կազմում «անկանթ գավաթները»: Քննարկվում է նաև փոքրածավալ (և նրբագեղ) անոթների խումբը:

Ատենախոսի ուշադրությունից դուրս չեն մնում խեցեղենի հարդարանքի ու զարդաբանվածքի առանձնահատկությունները: Պարզվում է, որ ինչպես Հայկական լեռնաշխարհի այլ տարածաշրջանների, այնպես էլ Շնող գետի ավազանի որոշ խեցանոթների վրա կարելի է տեսնել մարդու ձեռք կամ ոտք պատկերող առանձին մանրամասներ: Ձեռքի պատկերով անոթներից ներկայացվում են Բովեր 2 դամբանադաշտի տարածքում և Փիջուտի № 1 դամբարանում հայտնաբերված սափորները: Մեկ այլ խումբ են կազմում եռոտանի անոթները, որոնց նստուկները հենվում են մարդու ոտքերի ձևավորումով հիմքերին: Ենթադրություն է արվում, որ խեցեղենի վրա մարդու վերջույթների պատկերումն առնչվում է մարդակերպ կոթողների մշա-

կոյթին: Խեցանոթների ձևավորման մյուս առանձնահատկությունը, ատենախոսության հեղինակի կարծիքով, խոյակերպ հարդարանքն է: Կենդանու գլուխ հիշեցնող կամ «կենդանական ականջներով» օժտված կանթերը դիտարկելիս, կանթերի ելունդներին վերագրվում է եղջյուրների խորհրդանշական իմաստ: Զարդաբանված անոթների շարքում նշվում են երկրաչափական պատկերների զարդամոտիվներով և մատնեքավոր մակերևույթով, ինչպես նաև ուսերից մինչև հատակը զարդաբանված տանձաձև սափորները: Հետազոտողի տեսադաշտում են նաև կանթերի հարդարման մանրամասները (վերադիր «կոճակներ»), զարդաբանվածքը (հասկազարդ), ձևը (պարանաձև, արմնկաձև): Անոթների զարդաբանվածքի հիմնական տեսակները և դրանց տարածվածությունը ներկայացված են 56 աղյուսակներում:

Մետաղե առարկաների շարքում առաջինը քննարկվում են բրոնզե գոտիները, որոնք հայտնաբերվել են չորս դամբանադաշտերի յոթ դամբարաններից: Դրանցից մեկը զարդաբանված է երկրաչափական պատկերներով: Զինատեսակների թվում քննարկվում են նիզակները, սրերը, դաշույնները, նետասլաքները, մարտական դանակները, սակրերը, քլունգաձև մարտական կացինները: Խողովակակոթառ և լայն սայրով նիզակները, բացառությամբ մեկ օրինակի, պատրաստված են երկաթից: Դրանց մի մասն օժտված է ջլաղեղով: Բրոնզե նիզակը ձևով տարբերվում է երկաթե օրինակներից: Այն տերևաձև է, իսկ կոթառն օժտված է երկու ուռուցիկ գոտիներով, որոնց միջև անցք է արված: Պեղումներով հայտնաբերվել են զարգացած երկաթի դարաշրջանի երկմետաղ սրեր, որոնցից մեկի երկարությունը շուրջ 1 մ է: Դաշույնները պատրաստված են երկաթից, դրանց շեղբերը ձգված եռանկյունաձև են, իսկ կտրվածքում՝ շեղանկյունաձև: Քննության առարկա են դառնում նաև մարտական կոր դանակները և գրեթե ուղիղ շեղբով, դեպի վեր կլորացող սայրով կենցաղային դանակները: Նկարագրվում է Բովեր 1 դամբանադաշտում գտնված բրոնզե սակրը, որը վերագրվում է մ.թ.ա. IX-VIII դարերին: Դիտարկվում են քլունգաձև մարտական երկաթե կացինները, որոնք նմանեցվում են սկյութական տիպի

կացիններին և թվագրվում մ.թ.ա. VII-VI դարերով: Աշխատանքի մետաղյա գործիքներից ներկայացվում են երկաթե մանգաղները:

Հանգամանորեն քննարկվում են նաև պերճանքի առարկաները՝ ապարանջաններն ու օղերը, մանյակները, զանգակները, ճարմանդները, շիգղը, հերազարդերը, կախիկները, բրոնզե շղթաները, մազխիլները, շքասեղները, կոճակները, զարդախողովակները: Ապարանջանների շարքում առանձնացվում է վեց տիպ, ընդգծվում է խոյագլուխ և օձագլուխ ապարանջանների տարածված լինելը:

Թաղման գույքի երրորդ խումբն են կազմում քարից, կավից, ապակուց ու մածուկից պատրաստված առարկաները, ծովախեցիները: Շնող գետի ավազանում մակույկաձև աղորիքների բեկորներ են գտնվել ինչպես Բարձրյալի տնտեսական նշանակության տեղամասից, այնպես էլ դամբանաթմբերի լիցքից: Կախօղակով սրոցաքարերը հայտնաբերվել են դաշույնների, նետասլաքների և բրոնզե գոտու ուղեկցությամբ: Պերճանքի առարկաներից ուշագրավ են սարդիոնից, ապակուց ու ապակենման զանգվածից պատրաստված ուլունքները: Հազվագյուտ հանդիպող առարկաներից նշվում են ծովախեցիները, որոնք պատկանում են միջերկրածովյան և սևծովյան տեսակներին:

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է հասարակական հարաբերություններին: Այստեղ քննարկվում են խնդրի պատմամշակութային համատեքստը, տնտեսությանն ու արհեստներին առնչվող տվյալները, սոցիալական կարգավիճակ ցույց տվող առարկաները: Հայկական լեռնաշխարհի վաղ երկաթի դարաշրջանի երկրորդ փուլը բնորոշվում է որպես էական փոփոխությունների արդյունքում քաղաքակրթության նոր մակարդակի՝ պետականության կազմավորման շրջափուլ: Ըստ հեղինակի՝ Շնող գետի ավազանի դամբանային համալիրները ժամանակագրորեն տեղավորվում են լճաշեն-մեծամորյան մշակույթի IV, V և VI փուլերի սահմաններում, արձանագրվում է ուրարտական տարրի բացակայությունը: Նշվում է, որ արտադրական հումքի առկայությունը մեծ դեր էր խաղում հին հասարակությունների տնտեսական գործունեության, սոցիալական ու մշակութային կյանքի ձևավորման հարցում: Մարդա-

բանական տվյալների հիման վրա հետևություն է արվում, որ մետաղի արտադրության համար պահանջվող մարդկային աշխատուժը բավարար էր, որպեսզի տարածքի բնակիչներն իրենք պատրաստեին անհրաժեշտ զենք ու զրահը: Միջցեղային հարաբերություններում ընդգծվում է փոխանակման կարևոր նշանակությունը:

Երրորդ գլխի երկրորդ կետում դիտարկվում են տնտեսությանն ու արհեստներին առնչվող տվյալները, շեշտվում է տնտեսության առանցքային դերը հասարակական կյանքում: Ենթադրվում է, որ բրոնզե սակրը և քլունգաձև երկաթե կացինները կարող էին ոչ միայն իբրև զենք գործածվել, այլև որպես աշխատանքային գործիք: Վերջինների թվում են նաև սրոցաքարերը, ասեղները, մանգաղը: Հեղինակի կարծիքով՝ մետաղագործության զարգացման հիմքում ընկած էր զինամթերքի լայն պահանջարկը՝ արհեստավարժ ռազմիկների կողմից: Որոշ տվյալներ կան հնագույն ժամանակներում տարածաշրջանի հանքավայրերի հնարավոր շահագործման մասին:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ կետում հեղինակը գրում է, որ դամբարաններում հայտնաբերված տարաբնույթ առարկաներն արտացոլում են առկա սոցիալական շերտավորումը: Շնող գետի ավազանի դամբարանների ուսումնասիրությամբ բացահայտում է հանրության շերտավորված սոցիալական կառուցվածքը, որի կազմում նկատվում է երկու հիմնական խումբ՝ տնտեսությամբ զբաղվողներ և ռազմիկներ: Իհարկե, ամբողջական պատկեր ստանալու համար, անհրաժեշտ է հիմնվել նաև բնակելի ու արտադրական համալիրների ուսումնասիրությամբ ստացված տվյալների վրա: Որպես սոցիալական դիրքի ցուցիչ քննարկվում են (ճոխ) զարդաբանված զենքերը, բրոնզե գոտիները, կնքադրոշմները:

Շարադրանքի վերջում բերվում են այս ընդարձակ ուսումնասիրության արդյունքում կատարված հիմնական եզրահանգումները:

Ատենախոսության հեղինակը քաջատեղյակ է թեմային առնչվող գիտական աշխատություններին, որի մասին է վկայում օգտագործված գրականության ընդգրկուն ցանկը: Երկհատոր այս աշխատության մեջ արծարծված հարցերին սեղմ

անդրադառնալուց հետո, դրական գնահատելով քննարկվող թեկնածուական ատենախոսությունը, հարկ ենք համարում նաև ներկայացնել որոշ դիտողություններ և առաջարկներ:

1. էջ 27-ում խոսվում է ժամանակագրական III փուլի դամբարանների մասին, սակայն դրանք չեն նշվում: Նման մոտեցումը մեզ համար անհասկանալի է:
2. Դամբարանների կառուցվածքն ուսումնասիրվում է թաղման ծեսից առանձին (էջ 27-29 և էջ 29-43): Կարծում ենք, դրանք պետք է միասին քննարկել, քանի որ դամբարանը կառուցելու ծիսակարգը թաղման ծեսի բաղադրիչներից է:
3. Դամբարանների կառուցվածքը քննարկելիս չի նշվում դրանց ստորգետնյա կամ վերգետնյա լինելը (էջ 28), քարարկղները և սալարկղները չեն տարբերակվում (էջ 29):
4. Կարծես թե հավասարության նշան է դրվում կմախքի կծկված և ներարգանդային դիրքերի միջև (էջ 31): Ընդունված է համարել, որ կծկված դիրքը խորհրդանշում է քնած մարդուն, իսկ ներարգանդային դիրքը՝ պտղին: Այս երկրորդ դիրքն է առավելապես կապված վերածննդի հավատալիքների հետ:
5. «Կաթսայաձև անոթ» է անվանվում շարժական կրակարան/տապակարանը, որը գտնվել է Խառատանոցի № 8 դամբարանում (էջ 54):
6. Անդրադառնալով կենդանակերպ կանթերի ելունդներին, որոնք ուսումնասիրողները նմանեցնում են «կենդանու ականջների», Անի Սարատիկյանը դրանց եղջյուրների իմաստ է վերագրում (էջ 63): Այս տեսակետը համոզիչ չէ, քանի որ դրանք կարող են եղջյուրներ չունեցող գիշատիչ կենդանու ականջներ խորհրդանշել:
7. Խոսելով կոր և ուղիղ շեղբերով երկաթե դանակների մասին, ատենախոսը գրում է, որ դրանք տարածված են եղել «երկաթի դարի բոլոր փուլերում» (էջ 74) և հղում կատարում Գևորգ Տիրացյանի հիմնարար մենագրությանը (Тирацян 1988, 45): Բանն այն է, որ հղված աշխատությունում խոսք չկա վաղ երկաթ 1ա (մ.թ.ա. 1150-1050) փուլի մասին: Իսկ IX-VIII դարեր ասելով Գ. Տիրացյանը,

հավանաբար, նկատի է ունեցել այսօր վաղ երկաթ 1բ փուլ կոչվող ժամանակահատվածի վերին սահմանը և դրան հաջորդող ժամանակաշրջանը:

8. Առաջարկում ենք. ա) աշխատանքում հազվադեպ գործածված օտար բառերը փոխարինել դրանց հայերեն համարժեքներով:

բ) «անկանթ գավաթներ» խումբը վերանվանել «գավեր» կամ «ըմպանակներ/բաժակներ», իսկ «ռիտոնաձև անոթներ»-ի փոխարեն գործածել «կիսաձվաձև անոթներ» արտահայտությունը, քանի որ դրանք ոչ թե պտյակի, այլ կիսած ձվի տեսք ունեն:

գ) որևէ աշխատանք շարադրելիս այսուհետ գործել ավելի համարձակ՝ քննական մոտեցում ցուցաբերելով գիտական բոլոր աղբյուրներին:

Մեր դիտողություններն ու առաջարկները բնավ չեն ստվերում առաջին անգամ կատարված այս ծավալուն և համալիր բնույթի ուսումնասիրության կարևորությունը: Այն, ասես, կրկնակի ամրություն ունի. սույն ատենախոսությունը, բացի նախադասություններից, «շարադրված» է նաև հավելվածներում տեղ գտած աղյուսակներով ու գծապատկերներով, քարտեզներով և հանույթներով, լուսանկարներով, գրչանկարներով ու չափագրություններով: Մեծածավալ հնագիտական նյութի վիճակագրությունը մշակված է պատշաճ մակարդակով, հետազոտությունները կատարվել են հնագիտության մեջ կիրառվող ժամանակակից մեթոդների օգնությամբ: Աշխատությունը գրված է պարզ ու հասկանալի լեզվով, որը քննարկվող թեման լավ գիտենալու ցուցիչ է:

Ամփոփենք: Սույն թեկնածուական ատենախոսության հեղինակը կատարել է կարևոր և արդյունավետ աշխատանք: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Սեղմագրում թվարկված 9 հրապարակումներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթներն ու ամփոփ շարադրանքը, իսկ քննարկվող աշխատությունը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին: Գտնում ենք, որ «Շնող գետի ավազանը երկաթի դարում (ըստ հնագիտական նորահայտ տվյալնե-

րի)» վերնագրով թեկնածուական ատենախոսության հեղինակ Անի Անդրանիկի Սարատիկյանը միանգամայն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ. Գ. Թումանյան

պ.գ.դ. Գ. Թումանյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն՝ Տ. Գալալյան
14. 07. 2026 թ.